

ձվարանային պահուստի նվազման մեխանիզմները, հիմնավորում հորմոնալ հետազոտության, փոքր կոնքի և վահանաձև գեղձի գերձայնային հետազոտության անհրաժեշտությունը վերարտադրողական տարիքում ձվարանային ցածր պահուստ ունենալու առումով դիսկի խմբին պատկանող դեռահասների հետազոտության ընթացքում: Միննույն ժամանակ, փոքր կոնքի գերձայնային հետազոտությունը երաշխավորում է դրա օգտագործման արդյունավետությունը դեռահասների սեռական օրգանների և վահանաձև գեղձի ֆիզիոլոգիական կամ ախտաբանական վիճակների ճանաչման և դինամիկ վերահսկման համար:

Հեղինակը կարևորում է բժշկական աշխարհագրության և առողջության միջև կապը՝ ցույց տալով շրջակա միջավայրի գործոնների ազդեցությունը ընդհանուր առողջության վրա և հիվանդությունների ընդհանուր կառուցվածքում դեռահասների մոտ կյանքում առաջին անգամ ախտորոշված հիվանդությունների մարզային բաշխվածությունը: Տեսության երկրորդ մասում բերվում են տվյալներ դեռահաս տարիքի աղջիկների սեռական և արտասեռական հիվանդությունների՝ ձվարանային պահուստի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ:

Կարևորվում է դեռահասների կյանքի որակի գնահատումը որպես դեռահասների առողջության, նրանց տրամադրված բուժօգնության արդյունավետության գնահատման օբյեկտիվ չափանիշ, նկարագրվում կանքի որակի գնահատման մեթոդաբանությունը:

Հեղինակի կողմից մանրամասն ուսումնասիրվել են գրականության մեջ նկարագրված հետազոտական աշխատանքները: Հատուկ ուշադրության է արժանի հեղինակի կողմից առաջարկվող մանկական գինեկոլոգիայի բաժանմունքներում դեռահասի, նրա ծնողի կամ խնամակալի համար «խորհրդատվական սենյակ»-ի ներդրման գաղափարը, որտեղ ռեպրոդուկտիվ հետ կքննարկվեն և կմշակվեն ռազմավարական անհատական մոտեցումներ՝ ուղղված վերարտադրողական տարիքում պտղաբերության պահպանմանը և հղիության պլանավորմանը:

Ներկայացված նյութի կլինիկական բնութագիրը և օգտագործված մեթոդները ցույց են տալիս, որ հետազոտությունն իրականացվել է մեծ թվով մասնակիցների և դիտարկումների հիման վրա՝ օգտագործելով ժամանակակից հետազոտական մեթոդներ, ինչը թույլ է տալիս լիարժեք մոտենալ նպատակին հասնելուն և ստանալ